



ՀՀ ԿԳՄՍՆ

<<ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

**Ուսուցիչների պետական պարտադիր
վերապատրաստման
դասընթաց 2023**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը
«Ես և շրջակա աշխարհը» դասընթացում ինտեգրված դասերի
օրինակներով

Հետազոտող ուսուցիչ՝ Հերմինե Աբրահամյան

Բովանդակություն

- **Ներածություն __ էջ 2**
- **Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ընդհանուր բնութագիրը __ էջ 3**
- **Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիա __ էջ 4**
- **Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա __ էջ 5**
- **Կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիա __ էջ 9**
- **Նախագծային ուսուցման տեխնոլոգիա __ էջ 12**
- **Խաղային ուսուցման տեխնոլոգիա __ էջ 13**
- **Եզրակացություն __ էջ 16**

Ներածություն

Տարրական դպրոցում ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը կարևոր պայման է ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման, անձնակենտրոնության ապահովման համար: Հայտնի է, որ մանկավարժության առջև միշտ էլ ծառայած են եղել կրթադաստիարակչական գործընթացի կատարելագործմանն ուղղված մեթոդների, միջոցների, հնարների անընդհատ կատարելագործվող համալիրի մշակման և ներդրման խնդիրները:

Ուսուցման և դաստիարակության մեթոդները շարունակաբար կատարելագործման կարիք ունեն, որովհետև ոչ միայն անընդհատ զարգանում են գիտության տարբեր ոլորտները, ընդարձակվում է տեղեկատվության դաշտը, այլև փոխվում է կրթության գործընթացի կարևոր սուբյեկտը՝ երեխան: Բացառապես այլ է այսօրվա երեխայի հոգեկան, ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ճանաչողական հետաքրքրությունները, արժեհամակարգի բաղադրիչները: Այսօր յուրաքանչյուր մանկավարժ, այդ թվում տարրական դպրոցի ուսուցիչը, պետք է նպատակադիր լինի ուսուցման գործընթացի կատարելագործման, արդիականացման առավել արդյունավետ ուղիների որոնմանը, ինչը կնպաստի

սովորողների պահանջմունքային- դրդապատճառային ոլորտի խթանմանը, առաջադիմության բարձրացմանը, կրթության որակի բարելավմանը: Այդ առումով առաջնային է դառնում առանձին մեթոդիկաների կիրառումից անցումը ուսուցման նորագույն տեխնոլոգիաների իրականացմանը: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները՝ պրոբլեմային ուսուցման, համագործակցային ուսուցման, կոլեկտիվ ուսուցման, նախագծային ուսուցման և խաղային ուսուցման, մեծապես կիրառվում են « Ես և շրջակա աշխարհը» դասընթացի շրջանակներում:

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ընդհանուր բնութագիրը

Այսօր մանկավարժական տեխնոլոգիան դիտարկվում է որպես մանկավարժի հաջորդական գործողությունների համակարգ, որի նպատակը մանկավարժական այս կամ այն խնդրի լուծումն է կամ նախապես նախագծված մանկավարժական գործընթացի պլանաչափ և հաջորդական իրականացումը գործնականում: Որոշ գիտական աղբյուրներում մանկավարժական տեխնոլոգիան դիտարկվում է որպես ուսուցման և դաստիարակության օրինաչափությունների, նպատակների, սկզբունքների, բովանդակության, մեթոդների, միջոցների նախագծման և գործնականում կիրառման համակարգ, որի նպատակը ուսուցման գործընթացի կատարելագործումն է:

Ուսուցման ավանդական մեթոդիկաների համեմատությամբ տարրական դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում ուսուցման տեխնոլոգիաների կիրառումն ունի մի շարք առավելություններ՝

- Ուսուցման տեխնոլոգիայի հիմքում հստակորեն սահմանված վերջնական նպատակն է, մինչդեռ մեթոդիկայում այդ նպատակը հստակ չի սահմանվում և ընթացքում կարող է վերափոխվել,
- Հստակ նպատակադրումը ենթադրում է առավել որոշակի հայտորոշում, ինչը հնարավորություն է տալիս մշակել արդյունքների վերահսկողության օբյեկտիվ մեթոդներ, մանկավարժական գործընթացի որակի օբյեկտիվ վերահսկողություն,
- Ուսուցման տեխնոլոգիաների ալգորիթմական շղթայի բաղադրիչ է սովորողների գործունեության կազմակերպման բովանդակության և

եղանակների մշակումը՝ տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ,

- Ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը նվազեցնում է այն իրավիճակները, երբ ուսուցիչը ստիպված ընտրություն կամ հանպատրաստից որոշում պետք է կայացնի:

Այսպիսով, տարրական դպրոցում « Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացում շահեկան է ուսուցման մի շարք տեխնոլոգիաների կիրառումը:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիա


« Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասագործընթացում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն կրտսեր դպրոցականների ճանաչողության ակտիվացմանը, այլև որոշում է նրանց տարածական, տրամաբանական, մտածողության, ստեղծագործական ընդունակությունների, հետազոտական կարողությունների և նախասիրությունների զարգացման ուղղությունը:

« Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասագործընթացում պրոբլեմային դասի նախագծումը ենթադրում է փուլայնություն՝ պրոբլեմային իրավիճակի ստեղծում, ուսումնական խնդրի առաջադրում, լուծման եղանակների որոնում, եզրահանգումներ և արդյունքների ներկայացում, գնահատում:

Պրոբլեմային ուսուցման առանցքային բաղադրիչը պրոբլեմային իրավիճակն է, որը նպաստում է սովորողների մտածողության ակտիվացմանը: « Ես և շրջակա աշխարհը » ինտեգրված առարկայի դասավանդման գործընթացում պրոբլեմային իրավիճակներ կարելի է ստեղծել նախկինում սովորողների ձեռք բերած գիտելիքների վերլուծության և համադրման միջոցով՝ առաջադրելով պրոբլեմային հարցեր, կիրառելով որոնողական, հետազոտական հնարներ: Այս պարագայում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքների հաղորդումը, այլև դրանք որպես պրոբլեմ առաջադրումը, որի լուծմանն ընդգրկվում են սովորողները:

« Ես և շրջակա աշխարհը» դասընթացի շրջանակներում ուսուցիչը, նախքան ուսումնական նյութի հաղորդումը, կարող է ստեղծել պրոբլեմային իրավիճակ: Ուսուցիչը սովորողներին առաջարկում է պրոբլեմային հարց, որի օգնությամբ խթանում է կրտսեր դպրոցականների հետաքրքրասիրությունը, նրանց մղում որոնողական գործունեության, տալիս է այդ խնդիրը ինքնուրույն լուծելու հնարավորություն: Օրինակ 4-րդ դասարանում « Մարդը բնության մասնիկ է» դասընթացն անցնելիս նախքան ուսումնական նյութի հաղորդումը ուսուցիչը կարող է երեխաներին առաջադրել հետևյալ հարցը. **ինչի՞ կարիք ունեին**

Մարդիկ, երբ դեռ նոր էին առաջացել: Աշակերտների հնչեցրած բազմազան պատասխանները գրվում են գրատախտակին:



« Ես և շրջակա աշխարհը» դասընթացի շրջանակներում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է կրտսեր դպրոցականների մտավոր զարգացմանը, ակտիվացնում է ուսուցման գործընթացը, ձևավորում հետաքրքրություն ուսումնասիրվող նյութի նկատմամբ: Պրոբլեմային իրավիճակների առաջադրումը օգնում է բացահայտելու բնության մեջ գործող փոխադարձ կապերը, որոնողական հնարների միջոցով պարզելու անկենդան և կենդանի բնության ծագման ու զարգացման օրինաչափությունները, ձեռք բերելու ինտեգրված գիտելիքներ և այդ գիտելիքները կիրառելու առաջադրած խնդրի լուծման համար: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան հատկապես նշանակալի է կրտսեր դպրոցականների բնավոր խոսքի զարգացման տեսանկյունից: Այն նպաստում է նաև համագործակցության, մտածելու, միտքը ձևակերպելու, գաղափարը հստակեցնելու և հիմնավորելու կարողությունների զարգացմանը: Պրոբլեմային ուսուցման հիմնական թերությունը նրա ժամանակատար լինելն է:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան, ըստ կիրառման եղանակի, ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիա է, որի հիմքում մարդասիրական մանկավարժության դրույթներ են:

Համագործակցային ուսուցման հիմքում տարբեր ուսումնական իրավիճակներում սովորողների համատեղ ակտիվ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման գաղափարն է: Սովորողները միավորվում են խմբերում, նրանց տրվում է առաջադրանք, ընդ որում յուրաքանչյուրը պատասխանատու է ոչ միայն իր, այլև ամբողջ խմբի աշխատանքի արդյունքի համար: Այդ պատճառով էլ համեմատաբար ցածր առաջադիմություն ունեցող սովորողները ձգտում են սովորել: Արդյունքում աշխատում է ամբողջ դասարանը, քանի որ առաջադրված խնդրին միասնական լուծում պիտի տրվի:

« Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման գործընթացում համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը ենթադրում է՝

- Կրտսեր դպրոցականի նկատմամբ մարդասիրական, անձնակենտրոն մոտեցման ապահովում, քանի որ նպատակային է անձնային որակների համալիր ձևավորումը, կրթադաստիարակչական գործընթացի կենտրոնում երեխայի անձն է,

- Ակտիվացնող և զարգացնող դիդակտիկական համալիրի մշակում, որը կնպաստի բնագիտական, առողջապահական, սոցիալական գիտելիքների համակարգի յուրացմանը (ի՞նչ սովորեցնել, ինչպե՞ս սովորեցնել), իսկ կրթության բովանդակությունը դիտվում է որպես անձի զարգացման միջոց,
- Մարդ-բնություն համակարգում գործող պատճառահետևանքային կապերի բացահայտում, ինչը ձևավորվում է որոշակի վերաբերմունք, արժեքներ,
- Մանկավարժական աջակցում. Կրտսեր դպրոցականների հոգեկան և ֆիզիկական առողջության ապահովման, յուրաքանչյուր սովորողի անհատական զարգացման համար պայմանների ստեղծում:

Առանձնացվում է համագործակցային ուսուցման խմբերի հետևյալ տեսակները՝

- **Համագործակցային ֆորմալ խումբ** – փոքր խմբեր են (երկուսից չորս անդամ), կարող են գործել մեկ դասաժամից մինչև մի քանի շաբաթ և իրականացնել որևէ առաջադրանք: Այս խմբերում աշակերտներն աշխատում են ընդհանուր նպատակի շուրջ: Նրանք պետք է համագործակցեն, կիսվեն գաղափարներով, աջակցեն և խրախուսեն միմյանց:
- **Համագործակցային ոչ ֆորմալ խմբեր** – ժամանակավոր գործող խմբեր են, որոնց գործունեությունը կարող է տևել մի քանի րոպեից մինչև դասաժամի ավարտը: «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված առարկայի դասավանդման գործընթացում այս խմբերը կարող են օգտագործվել դիդակտիկ նյութերի, ուսումնական ֆիլմերի ցուցադրման ժամանակ որոշակի տրամադրություն ստեղծելուն, անհրաժեշտ նյութեր նախապատրաստելու, կարճ քննարկումներ կատարելու նպատակներով:
- **Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր**- կայուն անդամներով երկարաժամկետ, տարասեռ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի կամ ծրագրի շրջանակներում: Այն ներառում է բացակա ընկերներին աջակցելը, անցած ուսումնական նյութը բացատրելը, օգնել տնային առաջադրանքների կատարմանը և այլն:

« Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման գործընթացում նպատակային են ինչպես համասեռ համագործակցային , այնպես էլ պատահականության սկզբունքով կամ տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների ընդգրկվածությամբ խմբերը: Խմբում յուրաքանչյուր աշակերտի տրվում է որևէ դեր՝ առաջնորդ, ընդդիմախոս, նյութերի վերլուծաբան, փորձագետ, դիտորդ, գրառող, կազմակերպիչ, ստուգող՝ գնահատող, օգնական, խրախուսող, երազող, ժամանակը պահող և այլն:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը « Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման գործընթացում նպաստում է կրտսեր դպրոցականների մտածողության զարգացմանը, նրանք սովորում են լսել, ընկալել և վերլուծել ուսումնական նյութը, ինքնուրույն որոշումներ կայացնել, ձևավորում է ինքնազնահատական, համագործակցություն, փոխօգնություն, կոնֆլիկտների, խնդիրների, համատեղ լուծման կարողություններ:

Դաս պլան

Դասարանը՝ 3-րդ

Առարկան՝ ես և շրջակա աշխարհը

Դասի թեման՝ «Առողջ լինելու համար»

Դասի նպատակները և խնդիրները՝

- Սովորողն իմանա սննդամթերքների օգտակար և վնասակար հատկությունները
- Իմանա առողջ ապրելակերպի կանոնները
- Ընդլայնել սովորողների ճանաչողական գիտելիքները
- Չարգացնել համագործակցային կարողությունները

Դասի տեսակը՝ համակցված դաս

Դասի կահավորումը՝ քարտեր, սննդամթերքների նկարներ

Դասին կիրառվող մեթոդներն ու հնարները՝ գրույց,

Դասի ընթացքը

- Հին դասի հարցում
- Տնային աշխատանքի ստուգում

Նոր նյութի հաղորդում

- «Ինչպես արքայազնը դյուրազն դարձավ» դասի ընթերցում
- Զննարկում
 - Ձեր կարծիքով՝ արքայազնը ինչի՞ց էր գեր ու հիվանդոտ դարձել:
 - Ի՞նչ պետք է շատ ուտենք, որ ամրանան մեր ոսկորներն ու ատամները
 - Ի՞նչ պետք է շատ ուտենք, որ լավ տեսողություն ունենանք:
 - Ի՞նչ պետք է ուտենք, որ եռանդ և ուժ ունենանք:

- կատարել վարժություն 2-ը

- Խմբային աշխատանք

Դասարանը բաժանել 4-5 հոգանոց խմբերի, յուրաքանչյուր խմբին բաժանել քարտեր, որոնց վրա նկարված են տարբեր սննդամթերքներ, և աղյուսակներ՝ բաժանված երկու մասի: Աշակերտները քարտերում պատկերված նկարների օգնությամբ պետք է որոշեն, թե որ սննդամթերքներն են օգտակար և որոնք վնասակար, և ըստ այդմ էլ լրացնեն աղյուսակը.



Ձուկ



գազարի հյութ



չիպս



միզ



գազավորված ըմպելիք

միս

շոկոլադ

մեղր



արագ սնունդ

կաթ

բանջարեղեն

նրբերշիկ



ծու
շաքարավազ

պանիր

մայրնեղ

Օգտակար	Վնասակար

Կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիա

Կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիան ուսուցման արդյունավետ եղանակ է, որը նպաստում է կրտսեր դպրոցականների՝ ուսումնական կոլեկտի աշխատանքի կատարման կարողության, կոլեկտիվ մտածողության ձևավորմանը: Կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիայի հիմքում խմբերով աշխատանքն է: Ուսուցումն

իրականացվում է փոփոխվող զույգերով, երբ ամեն մի աշակերտ սովորեցնում է մյուսին: Այս եղանակի կիրառումը ներառում է տարամակարդակ կամ ավանդական առաջադրանքներ միջոցով գիտելիքների յուրացման մակարդակի թեստային ստուգում:

« Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման գործընթացում կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիան կարող է ներառել կոլեկտիվ, խմբակային, անհատական, զույգերով աշխատանքի ձևերը: Համաձայն կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիայի՝ աշխատանքը կազմակերպվում է այնպես, որ ուսումնական նյութի ընտրությունը կատարվում է նախ սովորողի տեսանկյունից, ապա ուսուցչի: « Ես և շրջակա աշխարհը» դասընթացի շրջանակներում սովորողների ուսումնական գործունեությունը կարելի է կազմակերպել քարտերի օգնությամբ, որոնցում նշված են առաջադրանքները, օրինակները կամ բնագիրը: Փոփոխվող կազմով զույգերի հետ քարտային աշխատանքի կազմակերպումը համեմատաբար նոր է և այդպիսի փոխուսուցման ընթացքում նպատակային է համակցվում անհատական և զույգերով աշխատանքը, ավելի արդյունավետ է օգտագործվում ժամանակը: Կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիայի տարրերի կիրառումը օգնում է կրտսեր դպրոցականների սեփական գործողությունների ինքնուրույն կազմակերպման կարողությունների զարգացմանը: Կոլեկտիվ ուսուցման ժամանակ սովորողները ոչ միայն խմբակային աշխատանք են կատարում, այլև նրանցից յուրաքանչյուրն աշխատում է անհատապես: Այսինքն՝ այն ոչ միայն տարբերակված, այլև անհատականացված ուսուցման հնարավորություն է տալիս:

Դասի պլան

Դասարանը՝ 2-րդ

Առարկան՝ Ես և շրջակա աշխարհը

Դասի թեման՝ վայրի և ընտանի կենդանիներ

Դասի նպատակները և խնդիրները՝

- Սովորողն իմանա վայրի և ընտանի կենդանիների տեսակները,
- Չարգացնել աշակերտների՝ կենդանիների մասին ունեցած գիտելիքները ,
- Չարգացնել համագործակցային և կոլեկտիվում աշխատելու կարողությունները,
- Դաստիարակել սեր և հոգատարություն կենդանիների նկատմամբ:

Դասի տեսակը՝ համակցված դաս

Դասին կիրառվող մեթոդներն ու հնարները՝ զրույց, մտազրոհ, խմբային աշխատանք

Դասի կահավորումը՝ տեսասահիկ, ընտանի և վայրի կենդանիների նկարներ, քարտեր:

Դասի ընթացքը.

Յին դասի հարցում


- Ի՞նչ բանջարեղեններ գիտեք,
- Ի՞նչ մրգեր գիտեք,
- Ի՞նչեր կարելի է պատրաստել մրգերից և բանջարեղեններից
- Որտե՞ղ են աճում մրգերը/բանջարեղենները,
- Որո՞նք են համարվում չոր/հյուսիսային պտուղներ:

Նոր նյութի հաղորդում

Ուսուցիչը տեղեկություններ է հայտնում կենդանիների մասին, նշում, թե դրանցից որոնք են տարածված Հայաստանում և որոնք են գրանցված կարմիր գրքում, ծանոթացնում դրանց տեսակները: Տեսասահիկի միջոցով երեխաների ծանոթանում են կենդանիների տեսակների հետ: Այնուհետև առաջադրում է պրոբլեմային հարց, որի շուրջ կատարվում է քննարկում.

- Ի՞նչ նշանակություն ունեն կենդանիները մեր կյանքում:

- Կատարել մտազրոհ



Ուսուցչի օգնությամբ երեխաները որոշում են, թե տվյալ կենդանիներից յուրաքանչյուրը որտեղ է բնակվում և ինչով է սնվում: Այնուհետև տեսասահիկի միջոցով ցուցադրվում են վայրի և ընտանի կենդանիների նկարներ և առաջադրվում հետևյալ հարցերը.

- Ինչո՞վ են տարբերվում կենդանիների այս խմբերն իրարից:

Ուսուցիչը տեղեկություններ է հայտնում վայրի և ընտանի կենդանիների վերաբերյալ, նշում դրանց տարբերությունները, հատկանիշները:

- Եկեք գուշակենք. Կենդանիների որ խումբն է վայրի, և որը ընտանի:
- Ի՞նչ գիտենք վայրի կենդանիների մասին,
- Ի՞նչ գիտենք ընտանի կենդանիների մասին:
- Ի՞նչ մթերքներ ենք ստանում հետևյալ կենդանիներից:

Խմբային աշխատանք

Դասարանը բաժանել 3-4 հոգանոց խմբերի: Խմբերից յուրաքանչյուրին բաժանել քարտեր, որոնց վրա պատկերված է մեկական կենդանու նկար: Նկարի հիման վրա երեխաները պետք է լրացնեն քարտերը.



- Անվանումը.....
- Տեսակը.....
- Սնվում է.....
- Բնակվում է.....
- Ի՞նչ դեր ունի բնության մեջ և մարդու կյանքում.....
- Բնութագրե՛ք արտաքին տեսքը.....:

Ավարտից հետո խմբերից յուրաքանչյուրը կարդում է իր գրածը: Մյուս խմբերը ստուգում են այն և կատարում լրացումներ:

Նախագծային ուսուցման տեխնոլոգիա

Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի նպատակը տարաբնույթ խնդիրների ինքնուրույն լուծման կարողությունների ձևավորումն է, սովորողների ինքնազարգացման ապահովումը: Նախագծման նյութականացված արդյունքը ուսումնական նախագիծն է, որը դիտարկվում է որպես սովորողների կողմից ուսումնական խնդրի ինքնուրույն, հանգամանալից ուսումնասիրուր և լուծում: Ժամանակակից ընկալմամբ՝ նախագծային ուսուցման տեխնոլոգիայի առանցքային գաղափարն է. <<ինչ սովորում եմ, գիտեմ ինչի համար է ինձ պետք, որտեղ և ինչպես>>:

« Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման գործընթացում նախագծային ուսուցման տեխնոլոգիան կողմնորոշված է կրտսեր դպրոցականների ինքնուրույն անհատական կամ խմբային աշխատանքի կազմակերպմանը, որն իրականացվում է ուսուցման որոշակի հատվածում: Տարրական դպրոցում այս տեխնոլոգիայի կիրառման հիմքում ճանաչողությունն է, որը նպաստում է տարբեր իրավիճակներում սովորողների հարմարմանը, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերմանը և գործնականում կիրառմանը:

« Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի շրջանակներում նախագծային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նախանշվում է ուսուցման մեթոդների, միջոցների ձևերի, ինտեգրված գիտելիքների, տեխնիկական և տեխնոլոգիական կարողությունների պլանավորված և հիմնավորված արդյունավետ հարաբերացում: Իրականացվող նախագծի արդյունքները ոչ թե տեսական ուղղվածություն պետք է ունենան, այլ կոնկրետ գործնական արդյունքներ, որոնք հարկ եղած դեպքում կարող են ներդնել: « Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի շրջանակներում նախագծային ուսուցման տեխնոլոգիայի նպատակային կիրառումը ուսուցչից պահանջում է նախապատրաստական աշխատանքներ:

« Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի շրջանակներում ընդգրկվելով ուսումնական նախագծերում՝ կրտսեր դպրոցականները սովորում են կատարել հետազոտություններ, հավաքել, վերլուծել տարաբնույթ տեղեկատվություն, կողմնորոշվել տեղեկատվության մեջ, ընտրել անհրաժեշտ նյութերը, տարանջատել գլխավորն ու երկրորդականը, համակարգված և հստակ ձևակերպել իրենց մտքերը, առաջադրել սոր մտքեր: Կարևոր նպատակ է նաև ապահովել սովորողների համագործակցությունը հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում: Այն պետք է լիովին համապատասխանի խմբային աշխատանքի արդյունավետ կազմակերպման պայմաններին:

« Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկայի շրջանակներում կարելի է կազմակերպել և իրականացնել փոքրիկ նախագծեր, օրինակ՝

- **Խաղերի նախագծեր**՝ կենդանիներին, բույսերին նվիրված տարբեր խաղեր, ժողովրդական պարեր, ներկայացումներ, որոնք ունեն բնաճանաչողական նշանակություն և միտված են խմբային աշխատանքի զարգացմանը,
- **Էքսկուրսիոն նախագծեր**, որոնք հատկապես կիրառելի են մարդ-բնություն-հասարակություն համակարգում դիտվող հիմնախնդիրների ուսումնասիրման համար՝ « Զայրենի բնաշխարհի գանձերը», « Մենք և տիեզերքը», « Մարդը բնության զավակն է» և այլն:
- **Պատմողական նախագծեր**՝ ուսուցանվող նյութի վերաբերյալ որևէ լրացուցիչ պատմության ներկայացում բանավոր, գրավոր, բեմականացմանը, երաժշտության ուղեկցությամբ, երգեցողությամբ, հեքիաթներ, պատմվածքներ, ավանդազրույցներ և այլն,
- **Կառուցողական նախագծեր**՝ օգտակար առարկաների՝ թռչնի բների, թակարդների, պատրաստուկների, չորացած տերևներով, ծաղիկներով կոմպոզիցիաների պատրաստում, օգտակար գործունեություն՝ ծառատունկ, բնապահպանական արշավների, շաբաթօրյակի կազմակերպում և այլն:

« Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված առարկայի դասավանդման գործընթացներում նախագծային ուսուցման տեխնոլոգիան, անշուշտ, ունի իր ուրույն տեղը և նպաստում է կրտսեր դպրոցականների ճանաչողական ակտիվության խթանմանը, ստեղծագործական և որոնողական կարողությունների զարգացմանը:

Խաղային ուսուցման տեխնոլոգիա

Ժամանակակից դպրոցում կենսական անհրաժեշտություն և պահանջմունք է մեթոդական ներուժի հարստացումը ընդհանրապես և ուսուցման փոխներգործուն տեխնոլոգիայի ներդրումը մասնավորապես: Այդպիսի տեխնոլոգիաներից է ուսուցման խաղային տեխնոլոգիան:

« Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված առարկայի դասավանդման գործընթացում խաղային տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս հետաքրքիր դարձնել ուսուցումը, ապահովել դրական հուզական մթնոլորտ, ակտիվացնել կրտսեր դպրոցականի գործողությունները, մտածական գործընթացների զարգացումը: Խաղային տեխնոլոգիաների տեղի ու դերի որոշումը մեծապես պայմանավորված է նրանից, թե որքանով է ուսուցիչը գիտակցում մանկավարժական խաղի գործառույթները, և ինչ սկզբունքով են դրանք դասակարգվում: Ս. Ա. Շմակովը նշում է, որ խաղը՝ որպես մանկավարժական երևույթ, կատարում է մի շարք գործառույթներ՝ սոցիալականացման, միջմշակութային հաղորդակցման, ինքնիրացման, ախտորոշիչ, թերապևտիկ հաղորդակցման, շտկման, ժամանցային:

Մ. Պ. Օսիպովան առաջարկել է խաղերի հետևյալ դասակարգումը.

- Դիդակտիկ խաղեր
- Ճանաչողական խաղեր
- Իմացական խաղեր
- Շարժողական խաղեր
- Սյուժետային խաղեր
- Խաղ –բեմականացում
- Ազգային խաղեր:

« Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի շրջանակներում խաղային գործունեության մոտիվացիայի հիմքում դիտարկվում է կամավորությունը, խաղերի ընտրության հնարավորությունը, մրցակցությունը, պահանջմունքների բավարարումը, ինքնահաստատման, ինքնիրացման ձգտումը: Որպես գործընթաց՝ խաղի կառուցվածքում առանձնացվում են դերեր, բովանդակություն, սյուժե, խաղային գործողություններ, մասնակիցների փոխհարաբերություններ և իրականություն, որը պայմանականորեն վերարտադրվում է խաղի մեջ:

Տարրական դպրոցում « Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման գործընթացում խաղը դիտարկվում է ոչ միայն որպես կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության առաջատար ձև, այլև որպես ինքնուրույն տեխնոլոգիա: Անհրաժեշտ է ընտրել այնպիսի խաղեր, որոնք իրենց կառուցվածքով և գործառույթներով համապատասխանում են կրթության բովանդակությանը, տրամաբանությանը, կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկություններին, մտածողությանը:

Դասի պլան

Դասարանը՝ 4-րդ

Առարկան՝ Ես և շրջակա աշխարհը

Դասի թեման՝ «Ի՞նչ է տնտեսությունը»

Դասի նպատակը՝

- գաղափար տալ տնտեսության և տնտեսության ճյուղերի մասին,
- Մեկնաբանել տնտեսության տարբեր ոլորտների նշանակությունը մարդու կյանքում,
- Չարգացնել համագործակցային կարողությունները:

Վերջնարդյունքներ՝

- Իմանա տնտեսության և տնտեսության ճյուղերի մասին:
- Հասկանա և կարևորի տնտեսության տարբեր ոլորտների նշանակությունը մարդու կյանքում:

Դասի տեսակը՝ համակցված դաս


Դասի կահավորումը՝ գծապատկեր, գունավոր թղթեր, թելեր, գործվածքի կտորներ, մկրատ, սոսինձ, ասեղ, ստվարաթղթե տուփեր, ներկեր, մատիտներ:

Դասին կիրառվող մեթոդներն ու հնարները՝ զրույց, մտագրոհ, գործնական աշխատանք

Դասի ընթացքը.

Հին դասի հարցում.

- Ի՞նչ է տնտեսությունը,
- Տնտեսության ի՞նչ ճյուղեր գիտեք



- Ի՞նչ նշանակություն ունի հողագործությունը մեր կյանքում,
- Ի՞նչ նշանակություն ունի անասնապահությունը մեր կյանքում:

Նոր նյութի հաղորդում

Ուսուցիչը տեղեկություններ է տալիս օգտակար հանածոների, շինարարության և արտադրության վերաբերյալ: Կատարվում է քննարկում:

Գործնական առաջադրանք.

Չին ժամանակներում ,երբ մեքենաներ չկային, արտադրության մեջ հիմնականում օգտագործվում էր ձեռքի աշխատանքը: Ձեր ձեռքի աշխատանքն օգտագործելով՝ փորձե՛ք արտադրություն կազմակերպել:

- *Բաժանվե՛ք խմբերի:*
- *Յուրաքանչյուր խումբ պետք է որոշի, թե ինչ է ուզում արտադրել: Օրինակ՝ շնորհավորական բացիկներ, տոնածառի կամ այլ խաղալիքներ, ծաղկեփնջեր, տիկնիկի հագուստ և այլն:*
- *Խմբում աշխատանքի բաժանում արե՛ք, որոշե՛ք, թե ով ինչ է անելու (նկարելու, կտրտելու, սոսնձելու, ներկելու, կարելու, կարելու, փակցնելու և այլն):*
- *Խմբերի արտադրանքը խնամքով պահե՛ք դասարանում՝ դրանք հաջորդ դասերին ձեզ պետք կգան:*

Տնային աշխատանք

Որպեսզի ապրանքը հրապուրիչ լինի, այն պետք է գեղեցիկ փաթեթավորել: Փորձի՛ր դասարանում ձեր պատրաստածի համար տուփ սարքել:

1. *Տուփի ձևվածքի պատկերն արտանկարի՛ր ստվարաթղթի վրա,*
2. *Չգուշողյամբ կտրի՛ր և գույնզգույն ներկի՛ր կամ նկարազարդի՛ր այն,*
3. *Կետագծեր տեղից ծալի՛ր: Որպեսզի ստվարաթուղթը հեշտ ծալվի , նախ նկարի ներսի կողմից մի քանի անգամ գրիչով սեղմելով անցի՛ր ստվարաթղթի վրայով,*
4. *Երկու կողմից ծաղկաթերթիկները հաջորդաբար միացնելով տուփ պատրաստի՛ր,*
5. *Իսկ հիմա մնաց, որ պիտակ գրես և կպցնես տուփին:*

Եզրակացություն

Ուսուցման արդյունավետության բարձրացման կարևորագույն ուղիներից է մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում: Ներկայումս « Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված առարկայի դասավանդման գործընթացում մեծապես կիրառվում են ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները՝ նպաստելով ուսումնական գործունեության արդյունավետ կազմակերպմանը: Դա իրականացվում է զանազան աշխատանքների, վարժությունների, գործնական աշխատանքների, խմբային աշխատանքների, խաղերի միջոցով: Ուսուցման պրոբլեմային, նախագծային, համագործակցային, կոլեկտիվ և խաղային տեխնոլոգիաների կիրառումը մեծապես նպաստում է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ավելացմանը, հոգեկան գործընթացների զարգացմանը և բարոյական, աշխատանքային դաստիարակությանը: